տում է օրէնքի լծից և Ս. Հոգու սրբանուէր գործիք շինում, որին համար վայելքներ են ամբողջ աշխարհի կայքն ու գոյքը։

Խոնարհութիւնը մարդուն հրեշտակ է դարձնում, ամբարտաւանութիւնը — հրեշտակին սատանայ։

Դու Հայ ժողովուրդ, միթէ կուզես ամբարտաւանութեամբ հպարտանալ։

Ո՜հ, ոչ. դու կխոնարհուես քո Արարչին առաջ, որպէս զի բարձրանաս դէպի նորա փառքը։

Ա. ՏԷՐ-ՄԻՔԷԼԵԱՆ.

## ԱԶՆԻՒ ԳՈՐԾՈՂԻՆ։

(1893 թ. Դ. ՃԵՄԱՐԱՆԻ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ)

ԿԱՐԴԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՌԱՋ.

—

Թո՛ղ Ծանրանայ կեանքի խաչն ուսիդ,
Հէք ժողովրդի հարազատ Դու Հայր,
Թո՛ղ սև-սև վշտեր կուտակուին սրտիդ,
Ճնշէ անխընայ քեզ պատող խաւար։

Թո՛ղ կեանքի հոսանքն որպէս մի տաշեղ
Քեզ տարուբերէ իւր ալիքներում։
Թո՛ղ բիրտ ամբոխը մռընչէ ահեղ,
Ըսպառնայ քեզ ահ, սոսկալի անկում։

Մի՛ յուսահատուիր, ով Հայր ցաւատանջ,
Սուրբ է քո ուխտը, վըսեմ քո կոչում—
Ինչպէս անվեհեր մի զինուոր Դու քաջ
Անվրհատ բռնիր դրոշը քո ձեռքում։

Քայլիր անսասան քո ընտրած ուղին,
Դու, ճշմարտութեան հրզօր ջատագով,
Թէև դժնդակ փուշն է անմեկին
Անտեղ սրփռուած մահաբեր թոյնով։

Քո քարոզած սուրբ, վեհ գաղափարներ
Պիտ առաջնորդին սիրած հայերիդ
Դէպի փառաւոր, դէպի կենսաբեր
Լոյսը շողշողուն, ուղին ճշմարիտ։

Եւ կը գայ մի օր, երբ ընդարմացած
Հէք ժողովուրդը դառն արցունքով
Կըզգայ իր սխալ և ուշքի եկած
Կը վառէ արձանդ ծաղկէ փունջերով։

Նա կը ճանաչէ անկեղծ, անկաշառ
Իւր բարերարին, իւր ազնիւ գործչին,
Որ չը զըլացաւ իւր կեանքն ոսկեվառ
Զոհել իւր սիրած, դգուած խեղճ ազգին։

ՍԱՄ. ԴԱՒԹԵԱՆ.

Աշ. Դ. ճեմարանի Զ. դաս.։

Ս. Էջմիածին
1893. հոկ. 5.



# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

## ԵՒՐՈՊԱՑԻՆԵՐԻ ԴՊՐՈՑԱՎԱՐՈՒԹԻՒՆ

(ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ).

—

Անմահ յիշատակի արժանի Գէորգ Դ. մեծագործ Հայրապետի հրամանով, յայտնի է, որ ես Եւրոպայ գնացի մանկավարժութիւն, դպրոցավարութիւն ուսումնասիրելու Գէորգեան ճեմարանի մէջ դասախօսելու համար։ Բայց Եւրոպայում գտնուած միջոցիս ճեմարանի հանգամանքները բոլորովին փոխուեցան։ Ուսումնասիրութեանս արդիւնքը և նկատողութիւններս մի գրքոյկ կազմեցին,